

ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ստեղծման ընդհանուր դրույթներ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի համաձայն ֆինանսավորվող միջսահմանային համագործակցության ծրագրերի համար կիրարկող կանոններ սահմանող՝ Հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 9-ի (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի [1] ստեղծման ընդհանուր դրույթներ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգը և, մասնավորապես, դրա 11(1) հոդվածը,

Քանի որ

1) (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի ուղղություններից մեկը Եվրոպական միության անդամ պետությունների և գործընկեր երկրների միջև համագործակցությունն է Եվրոպական միության արտաքին սահմանի ընդհանուր հատվածին հարակից տարածքներում, որի նպատակն է՝ ստեղծել բարեկեցիկ և բարիդրացիական հարաբերությունների տարածք (այսուհետ՝ ԵՀԳԳ միջսահմանային համագործակցություն),

2) (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի 11-րդ հոդվածը պահանջում է, որ Հանձնաժողովն ընդունի «Միջսահմանային համագործակցություն» III բաժնի իրականացման համար հատուկ դրույթներ սահմանող կիրարկող կանոններ, և որ կիրարկող կանոններով կարգավորվող խնդիրները ներառեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են համաֆինանսավորման տոկոսադրույքը, համատեղ գործառնական ծրագրերի նախապատրաստումը, համատեղ մարմինների նշանակումը և դրանց գործառույթները, դիտանցման և ընտրող համատեղ կոմիտեների և համատեղ քարտուղարության դերն ու գործառույթը, թույլատրելի ծախսերը, համատեղ նախագծի ընտրությունը, նախապատրաստական փուլը, Համայնքի կողմից տրամադրվող օժանդակության տեխնիկական և ֆինանսական կառավարումը, ֆինանսական հսկողությունը և աուդիտը, դիտանցումն ու գնահատումը, հնարավոր շահառուների համար իրականացվող՝ տեսանելիությանը և տեղեկատվության ապահովմանն ուղղված միջոցառումները,

3) (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի 21-րդ հոդվածը սահմանում է, որ կիրարկող կանոնները պետք է սահմանեն նաև ԵՀԳԳ միջսահմանային համագործակցության շրջանակներում կատարվող գնումների վերաբերյալ կանոններ,

4) (ԵՀ) թիվ 1628/2006 կանոնակարգի 7(3) հոդվածով նախատեսված ռազմավարության փաստաթուղթը սահմանում է Հանձնաժողովի կողմից ԵՀԳԳ միջսահմանային համագործակցությանը ցուցաբերվող աջակցության

ռազմավարական շրջանակը և ընդգրկում է այդ համագործակցության ինդիկատիվ ծրագիրը,

5) ԵՀԳԳ միջսահմանային համագործակցությանը ցուցաբերվող համայնքային օժանդակությունն իրականացվում է ռազմավարության փաստաթղթում սահմանված համատեղ գործառնական ծրագրերի միջոցով,

6) անհրաժեշտ է մշակել կիրարկող կանոններ, որոնք կսահմանեն միասնական հատուկ դրույթներ միջսահմանային համագործակցության վերաբերյալ՝ (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի իմաստով՝ մասնակից երկրներին որոշակի ճկունության հնարավորություն տալով այն մանրամասն միջոցառումների առումով, որոնք վերաբերում են կոնկրետ ծրագրերի կազմակերպմանը և իրականացմանը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ծրագրին բնորոշ հատկանիշները: Այս սկզբունքի հիման վրա և սույն Կանոնակարգի համաձայն՝ մասնակից երկրները պետք է, ընդհանուր համաձայնությամբ, ԵՀԳԳ միջսահմանային համագործակցության մանրամասն միջոցառումների վերաբերյալ առաջարկներ ներկայացնեն համատեղ գործառնական ծրագրում, որը պետք է ընդունվի Հանձնաժողովի կողմից՝ (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի 9(6) հոդվածով սահմանված կարգով,

7) հաշվի առնելով այն փաստը, որ բոլոր մասնակից երկրները պետք է ներգրավված լինեն ծրագրի վերաբերյալ որոշումներ ընդունող կառույցներում, մինչդեռ ծրագրի իրականացման խնդիրը պետք է վերապահվի մասնակից երկրներից մեկում գործող Համատեղ ղեկավարման մարմնին, անհրաժեշտ է սահմանել ծրագրի կառավարման տարբեր կառույցների միջև գործառնականության բաժանման մասին միասնական կանոններ,

8) քանի որ ծրագրերը պետք է իրականացվեն ընդհանուր կառավարման միջոցով, ծրագրի կառավարման և հսկողության համակարգերը պետք է համապատասխանեն Համայնքի կանոններին: Հանձնաժողովի կողմից ծրագրի ընդունումը պետք է համարվի այդ համակարգերի նախնական (ex ante) հաստատում: Հանձնաժողովը պետք է դիտանցի յուրաքանչյուր ծրագրի իրականացումը Համատեղ դիտանցման կոմիտեում հնարավոր ներգրավվածության և Համատեղ ղեկավարման մարմնի կողմից իրեն ներկայացվող զեկույցների միջոցով:

9) հնարավոր շահառուների՝ գործընկեր երկրներում ծրագրին լիարժեք մասնակցությունն ապահովելու և Եվրոպական միության անդամ պետությունում գործունեություն իրականացնողների ու գործընկեր երկրում գործունեություն իրականացնողների նկատմամբ կառավարման միևնույն միջոցները կիրառելու նպատակով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՀԳԳ միջսահմանային համագործակցությանն ուղղված հատկացումները կառավարվում են Եվրոպական միության արտաքին քաղաքականության շրջանակներում, Եվրոպական հանձնաժողովի կողմից ֆինանսավորվող արտաքին գործողությունների նկատմամբ կիրառվող պայմանագրային ընթացակարգերը պետք է կիրառվեն այն բոլոր նախագծերի նկատմամբ, որոնք ֆինանսավորվում են (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգով հաստատված միջսահմանային համագործակցության շրջանակներում,

10) ծրագրի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է սահմանել գնահատման և դիտանցման միջոցառումներ,

11) այդ միջոցառումները համապատասխանում են Խորհրդի (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

ԳԼՈՒԽ I

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոդված 1

Կարգավորման առարկան և գործողության ոլորտը

Սույն Կանոնակարգը սահմանում է (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի կիրարկման կանոններ՝ միջսահմանային համագործակցության ծրագրերի առումով:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1. «տեխնիկական աջակցություն» նշանակում է նախապատրաստական աշխատանք, կառավարում, դիտանցում, գնահատում, տեղեկատվություն, աուդիտ և հսկողություն, ինչպես նաև համատեղ գործառնական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ վարչական կարողությունների զարգացմանն ուղղված այլ գործողություններ.

2. «շահառու» նշանակում է սուբյեկտ, որը Համատեղ ղեկավարման մարմնի հետ ստորագրում է դրամաշնորհային պայմանագիր և որը ծրագրի իրականացման համար իրավական և ֆինանսական լիակատար պատասխանատվություն է ստանձնում այդ մարմնի առջև. այն ստանում է ֆինանսական օժանդակությունը Համատեղ ղեկավարման մարմնից և ապահովում է դրա կառավարումը, իսկ հարկ եղած դեպքում, նաև բաշխումը՝ իր գործընկերների հետ կազմած համաձայնագրերին համապատասխան: Համատեղ ղեկավարման մարմնի առջև պատասխանատու է միայն շահառուն, և գործողությունների գործառնական և ֆինանսական զարգացումների համար այն անմիջականորեն հաշվետու է այդ մարմնին.

3. «կատարող» նշանակում է սուբյեկտ, որը Համատեղ ղեկավարման մարմնի հետ ստորագրում է ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման կամ մատակարարման պայմանագիր և որն այդ պայմանագրի իրականացման համար իրավական և ֆինանսական լիակատար պատասխանատվություն է ստանձնում Համատեղ ղեկավարման մարմնի առջև.

4. «ռազմավարության փաստաթուղթ» նշանակում է (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի 7(3) հոդվածում նշված փաստաթուղթը, որով սահմանվում են համատեղ գործառնական ծրագրերի ցանկը, այդ ծրագրերի բազմամյա ինդիկատիվ փաթեթը և յուրաքանչյուր ծրագրով դիտարկվող տարածքային միավորները.
5. «մասնակից երկրներ» նշանակում է բոլոր անդամ պետությունները և գործընկեր երկրները, որոնք մասնակցում են համատեղ գործառնական ծրագրին.
6. «գործընկեր երկրներ» նշանակում է (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի հավելվածում թվարկված երկրները և տարածքները.
7. «լայնածավալ նախագծեր» նշանակում է նախագծեր, որոնք կազմված են մի շարք աշխատանքներից, գործողություններից կամ ծառայություններից՝ նախատեսված կոնկրետ բնույթի մեկ միասնական գործառույթի իրականացման համար, և որոնք հետապնդում են ընդհանուր շահերից բխող հստակ սահմանված նպատակներ՝ միջսահմանային ներդրումների իրականացման համար.
8. «համատեղ գործառնական ծրագրին մասնակցող երկրների սեփական միջոցներ» նշանակում է մասնակից երկրների կենտրոնական, տարածքային կամ տեղական բյուջեներից ստացվող ֆինանսական միջոցներ.
9. «նախագծերի հետևողական իրականացում» նշանակում է նախագծի կառավարման պարբերաշրջանի համար կիրառվող մեթոդին համապատասխան՝ ծրագրով ֆինանսավորվող գործողությունների հետևողական կատարում՝ ծրագրավորումից մինչև իրականացման տեխնիկական դիտանցում և գնահատում:

ԳԼՈՒԽ II

ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

ՄԱՍ 1

Համատեղ գործառնական ծրագրերը

Հոդված 3

Համատեղ գործառնական ծրագրերի նախապատրաստումը

Յուրաքանչյուր գործառնական ծրագիր սահմանվում է բոլոր մասնակից երկրների ընդհանուր համաձայնությամբ՝ (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգին, ռազմավարության փաստաթղթին և սույն Կանոնակարգին համապատասխան:

Հոդված 4

Համատեղ գործառնական ծրագրերի բովանդակությունը

Յուրաքանչյուր գործառնական ծրագիր նկարագրում է ձեռնարկվող գործողությունների նպատակները, գերակայություններն ու միջոցները և բացատրում,

թե ինչպես են դրանք առնչվում տվյալ երկրներում և տարածքներում իրականացվող ընթացիկ կամ նախատեսված երկկողմ կամ բազմակողմ այլ ծրագրերի, մասնավորապես՝ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող ծրագրերին:

Մասնավորապես, յուրաքանչյուր գործառնական ծրագիր՝

ա) թվարկում է ծրագրով դիտարկվող տարածքային միավորները, ներառյալ հարակից հնարավոր տարածքները, որպես տարածքներ, որտեղ կարող են իրականացվել ծրագրով ֆինանսավորվող նախագծեր՝ ինչպես սահմանված է (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգով և ռազմավարության փաստաթղթով.

բ) սահմանում է կանոններ երրորդ երկրների այն հարակից տարածքների՝ ծրագրերին մասնակցության վերաբերյալ, որոնց վրա չի տարածվում (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգը, որոնք, սակայն, կարող են մասնակցել համագործակցությանը՝ ռազմավարության փաստաթղթի հիման վրա.

գ) սահմանում է ռազմավարության փաստաթղթով սահմանված նպատակների իրականացմանն ուղղված գերակայություններ և միջոցներ.

դ) սահմանում է Համատեղ դիտանցման կոմիտեի կազմը՝ սույն Կանոնակարգի 11-րդ հոդվածին համապատասխան.

ե) սահմանում է մասնակից երկրների կողմից նշանակվող՝ Համատեղ ղեկավարման մարմնի գործառույթն իրականացնող մարմինը.

զ) նկարագրում է Համատեղ ղեկավարման մարմնի կողմից սույն Կանոնակարգի 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածներով սահմանված կարգով ծրագրի կառավարման նպատակով սահմանվելիք մեխանիզմը. Այդ նկարագրությունը պետք է բավականաչափ մանրամասն լինի, որպեսզի Հանձնաժողովը վստահության հիմքեր ունենա, որ ստեղծված են լավագույն միջազգային փորձի վրա հիմնված ներքին հսկողության՝ նպատակային և տնտեսական արդյունավետությամբ օժտված համակարգեր.

է) ներառում է ֆինանսական աղյուսակ, որը նկարագրում է ծրագրի շրջանակներում տարվա կտրվածքով միջոցների տրամադրման գծով նախնական սահմանված պարտավորությունները, ինչպես նաև վճարումները, որոնք ամրագրվում են գերակայությունների համապատասխան, և որը, մասնավորապես, սահմանում է տեխնիկական աջակցությանը հատկացվող գումարները.

ը) նախանշում է ծրագրի իրականացման մեթոդները՝ սույն Կանոնակարգի 23-րդ հոդվածում նշված պայմանագրային ընթացակարգերին համապատասխան.

թ) սահմանում է նախնական ինդիկատիվ ժամանակացույց՝ ընթացակարգերն սկսելու և ֆինանսավորման ենթակա նախագծերն ընտրելու համար.

ժ) նկարագրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուսումնասիրությունների վերաբերյալ կարգավորող պահանջները և ներկայացնում է

նախնական ինդիկատիվ ժամանակացույց՝ այդ ուսումնասիրություններն իրականացնելու համար.

ժա) նշում է ծրագրով հաստատված լեզուն (լեզուները).

ժբ) ներառում է տեղեկատվության և հաղորդակցության պլան՝ 42-րդ հոդվածին համապատասխան:

Երկրորդ պարբերության (ե) կետով նախատեսված աղյուսակում նշվում է Եվրոպական համայնքի կողմից ցուցաբերվող օժանդակությունը, և բաշխվում են Հանձնաժողովի կողմից մինչև 2013 թվականը յուրաքանչյուր տարի հատկացվելիք նախնական ինդիկատիվ գումարները (2011-2013 թվականների հատկացումները հաստատվում են 2011-2013 թվականների ինդիկատիվ ծրագրով): Աղյուսակն ընդգրկում է նաև մասնակից երկրների սեփական միջոցներից համաֆինանսավորման համար հատկացվող նախնական ինդիկատիվ գումարները:

Երկրորդ պարբերության (ը) կետի նպատակներով՝ ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող նախագծերը, որպես կանոն, ընտրվում են հայտերի հրավերներից հետո: Այնուամենայնիվ, մասնակից երկրները, Եվրոպական հանձնաժողովի հետ համաձայնությամբ, կարող են համատեղ նախանշել միջսահմանային ներդրումային լայնածավալ նախագծեր, որոնք ընտրվում են առանց հայտերի հրավերի. նման նախագծերը հատուկ նշվում են ծրագրում կամ ընտրվում են ավելի ուշ փուլում՝ 11-13-րդ հոդվածներում նշված Համատեղ դիտանցման կոմիտեի կողմից՝ պայմանով, որ այդ ծրագրերը համահունչ լինեն ծրագրի գերակայություններին ու դրանով նախատեսված միջոցներին, և որ առկա լինի հատուկ այդ նպատակով նախատեսված բյուջեն:

Հոդված 5

Համատեղ գործառնական ծրագրերի ընդունումը

1. Յուրաքանչյուր համատեղ գործառնական ծրագիր Համատեղ ղեկավարման մարմնի կողմից Հանձնաժողովին է ներկայացվում բոլոր այն պետությունների հստակ համաձայնությունից հետո, որոնք մասնակցել և նպաստել են ծրագրի նախապատրաստմանը:

2. Հանձնաժողովն ուսումնասիրում է համատեղ գործառնական ծրագիրը՝ ստուգելու, թե արդյոք այն ընդգրկում է 4-րդ հոդվածում նշված բոլոր տարրերը, ինչը, մասնավորապես, ներառում է՝

ա) ռազմավարության փաստաթղթի հետ դրա համապատասխանության գնահատում.

բ) վերլուծության որակի, առաջարկվող գերակայությունների և միջոցների հետ դրա համապատասխանության, ծրագրում ներգրավված տարածքներում ընթացիկ կամ նախատեսված այլ երկկողմ և բազմակողմ ծրագրերի հետ դրա համապատասխանության ստուգում.

զ) Համայնքի կիրառվող օրենսդրության հետ ծրագրի համապատասխանության ստուգում.

դ) ստուգում, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուսումնասիրությունները, որոնք կարող են պահանջվել, իրականացվել են կամ նախատեսվում են՝ նախքան առաջարկվող նախագծերի իրականացումը.

ե) ծրագրի ֆինանսական աղյուսակի հետևողականության ապահովում, մասնավորապես՝ Հանձնաժողովի կողմից հատկացվելիք գումարների մասով.

զ) ապահովում Համատեղ ղեկավարման մարմնի կառավարման կարողությունների համապատասխանությունը ծրագրի շրջանակներում նախատեսված գործողությունների ծավալին, բովանդակությանը և բարդությանը: Մասնավորապես, Հանձնաժողովն ստուգում է, որ Համատեղ ղեկավարման մարմինն ունենա ամբողջ աշխատաժամանակով ծրագրում ներգրավված պատշաճ որակավորում ունեցող բավարար մարդկային ռեսուրսներ, համակարգչայնացված կառավարման և հաշվապահական հաշվառման համապատասխան մեթոդներ, ինչպես նաև Համայնքի օրենսդրությանը համապատասխանող ֆինանսական համակարգեր: Եթե Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում, այդ ստուգումները կարող են անցկացվել տեղում իրականացվող նախնական աուդիտի միջոցով.

է) հավաստիացում, որ Համատեղ ղեկավարման մարմնի կողմից պլանավորվել և ստեղծվել են ներքին հսկողության և աուդիտի համապատասխան համակարգեր՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա:

3. Համատեղ գործառնական ծրագիրը վերանայելուց հետո Հանձնաժողովը կարող է մասնակից երկրներից պահանջել լրացուցիչ տեղեկատվություն կամ, անհրաժեշտության դեպքում, վերափոխել որոշ մասեր:

4. Յուրաքանչյուր համատեղ գործառնական ծրագրի ընդունումը դիտարկվում է որպես Հանձնաժողովի կողմից՝ Համատեղ ղեկավարման մարմնի ստեղծած կառավարման և հսկողության մեխանիզմների նախնական հաստատում:

5. Յուրաքանչյուր գործառնական ծրագիր ընդունվում է Հանձնաժողովի որոշմամբ և գործում է ծրագրի ամբողջ ընթացքում:

Հոդված 6

Համատեղ գործառնական ծրագրի դիտանցումը և գնահատումը

1. Յուրաքանչյուր գործառնական ծրագրի դիտանցումը և գնահատումը նպատակ է հետապնդում բարելավել ծրագրի իրականացման որակը, արդյունավետությունը և հետևողականությունը:

Գնահատումների արդյունքները հաշվի են առնվում հետագա ծրագրավորումների ընթացքում:

2. Համատեղ գործառնական ծրագրի միջնաժամկետ գնահատումն իրականացվում է որպես ծրագրի վերանայման մաս՝ ռազմավարության փաստաթղթին համապատասխան:

Այս գնահատումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից, և գնահատման արդյունքները, որոնք ինդիկատիվ ծրագրի նպատակներով փոխանցվում են Համատեղ դիտանցման կոմիտեին և Համատեղ ղեկավարման մարմնին, կարող են ճշգրտումներ մտցնել ծրագրում:

3. Միջնաժամկետ գնահատումից բացի՝ Հանձնաժողովը ցանկացած պահի կարող է իրականացել համատեղ գործառնական ծրագրի կամ դրա մի մասի գնահատում:

4. Համատեղ գործառնական ծրագրով ֆինանսավորվող նախագծերի իրականացման փուլի ավարտին հաջորդող տարվա ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացվում է ծրագրի փաստացի (ex post) գնահատում:

Հոդված 7

Համատեղ գործառնական ծրագրերում փոփոխություններ կատարելը

1. Համատեղ ղեկավարման մարմինը, Համատեղ դիտանցման կոմիտեի նախնական հաստատմամբ, կարող է Համատեղ գործառնական ծրագրում անմիջականորեն կատարել այնպիսի ճշգրտումներ, որոնք միայն ներառում են յուրաքանչյուր գերակայության համար սկզբնապես հատկացված՝ Համայնքի միջոցների 20%–ը չգերազանցող փոխանցումը մեկ գերակայությունից մյուսին: Համատեղ ղեկավարման մարմինը Հանձնաժողովին տեղեկացնում է ցանկացած նման փոփոխության մասին:

Համայնքի միջոցներից ֆինանսավորվող տեխնիկական աջակցության նկատմամբ սույն կանոնը կիրառվում է միայն Հանձնաժողովի նախնական գրավոր հաստատմամբ:

2. Համատեղ դիտանցման կոմիտեի հիմնավորված պահանջից հետո կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ և Համատեղ դիտանցման կոմիտեի համաձայնությամբ, համատեղ գործառնական ծրագրերը կարող են վերանայվել և, հարկ եղած դեպքում, դրանցում փոփոխություններ կատարվել հետևյալ դեպքերում՝

ա) սոցիալ-տնտեսական լուրջ փոփոխությունները կամ ծրագրում ընդգրկված ոլորտների՝ համայնքային, ազգային կամ տարածքային գերակայություններում կատարվող էական փոփոխությունները հաշվի առնելու նպատակով.

բ) իրականացման հետ կապված բարդությունների հետևանքով, որոնք առաջացնում են զգալի ուշացումներ.

գ) եթե տեղի է ունենում համայնքային միջոցների փոխանցում մեկ գերակայությունից մյուսը, որի դեպքում չի պահպանվում սույն հոդվածի 1-ին պարբերությունում նշված ճկունության սահմանը.

դ) 6(2) և 6(3) հոդվածում նշված գնահատումներից հետո.

ե) եթե 44-րդ հոդվածով սահմանված կարգով ծրագիրը դադարեցվում է:

3. 2-րդ պարբերությունում նշված դեպքերում Համատեղ գործառնական ծրագրում կատարված ցանկացած փոփոխություն ընդունվում է Հանձնաժողովի որոշմամբ, և 10-րդ հոդվածում նշված ֆինանսավորման համաձայնագրերում պահանջվում է փոփոխության կատարում:

Հոդված 8

Լեզուների գործածությունը

1. Համատեղ գործառնական ծրագրերի կառավարման կառույցները, որպես իրենց աշխատանքային լեզու (լեզուներ), գործածում են Եվրոպական միության պաշտոնական լեզուներից մեկը կամ մի քանիսը:

2. Հաշվի առնելով ծրագրերի գործընկերային բնույթը՝ նախագծի շահառուները կարող են իրենց նախագծին վերաբերող փաստաթղթերը Համատեղ ղեկավարման մարմնին ներկայացնել իրենց ազգային լեզվով՝ պայմանով, որ նման հնարավորության մասին հստակ նշված է ծրագրում, և Համատեղ ղիտանցման կոմիտեն Համատեղ ղեկավարման մարմնի միջոցով, անհրաժեշտության դեպքում, ապահովում է բանավոր և գրավոր թարգմանություն:

3. Ծրագրով ընտրված բոլոր լեզուների համար բանավոր և գրավոր թարգմանության ծախսերը կատարվում են՝

ա) տեխնիկական աջակցության բյուջեից՝ համատեղ գործառնական ծրագրի մակարդակում.

բ) յուրաքանչյուր առանձին նախագծի բյուջեից՝ նախագծի մակարդակում:

Հոդված 9

Համատեղ գործառնական ծրագրերի սկզբնական փուլը

1. Հանձնաժողովի որոշմամբ համատեղ գործառնական ծրագրի ընդունումից հետո, ծրագիրն անմիջապես մեկնարկում է անդամ պետություններում՝ Ֆինանսական հեռանկարի (Միջինստիտուցիոնալ համաձայնագիր 2006/C 139/01) [2] 1Բ տողով հատկացում կատարելով միջսահմանային համագործակցության Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքին: Կարող են ձեռնարկվել նաև ծրագրի մեկնարկի համար անհրաժեշտ համատեղ գործողություններ, մասնավորապես՝

ա) Համատեղ ղեկավարման մարմնի և Համատեղ տեխնիկական քարտուղարության ստեղծում.

բ) Համատեղ դիտանցման կոմիտեի մեկնարկային հանդիպումներ, որոնց մասնակցում են նաև ֆինանսավորման համաձայնագիր դեռևս չստորագրած գործընկեր երկրների ներկայացուցիչները.

գ) մրցութային ընթացակարգերի կամ հայտերի հրավերների նախապատրաստում և իրականացում, անհրաժեշտության դեպքում՝ ֆինանսավորման համաձայնագրերի ստորագրմամբ պայմանավորվող կասեցման դրույթ:

2. 1-ին պարբերությունում նշված Հանձնաժողովի որոշումները յուրաքանչյուր գործընկեր երկրում կիրառվում են այդ երկրի կողմից 10-րդ հոդվածին համապատասխան ֆինանսավորման համաձայնագրի ստորագրման պահից:

ՄԱՍ 2

Ֆինանսավորման համաձայնագիրը

Հոդված 10

Ֆինանսավորման համաձայնագրերի ստորագրումը

1. Յուրաքանչյուր համատեղ գործառնական ծրագրի համար Հանձնաժողովի և յուրաքանչյուր գործընկեր երկրի միջև կնքվում է ֆինանսավորման համաձայնագիր: Յուրաքանչյուր գործառնական ծրագրի շրջանակներում նշանակված Համատեղ ղեկավարման մարմինը կարող է վավերացնել ֆինանսավորման համաձայնագիրը:

2. Հանձնաժողովի կողմից ընդունված համատեղ գործառնական ծրագիրը կցվում է ֆինանսավորման համաձայնագրին՝ որպես տեխնիկական հավելված:

3. Ֆինանսավորման յուրաքանչյուր համաձայնագիր կնքվում է ամենաուշը մինչև համատեղ գործառնական ծրագիրն ընդունելու մասին Հանձնաժողովի որոշմանը հաջորդող տարվա վերջը (N+1 կանոն):

4. Եթե ֆինանսավորման համաձայնագիրը չի կնքվում սահմանված ժամկետում, գործընկեր երկրի հետ համատեղ գործառնական ծրագրի արտաքին բաղադրիչը չի կարող սկսվել:

Եթե ծրագիրը ներառում է մի քանի գործընկեր երկիր, յուրաքանչյուր գործընկեր երկրի հետ այն կարող է սկսվել այդ երկրի կողմից ֆինանսավորման համաձայնագիրն ստորագրելուց անմիջապես հետո:

5. Եթե սահմանված ժամկետում ոչ մի գործընկեր երկիր չի ստորագրում ֆինանսավորման համաձայնագիր, համատեղ գործառնական ծրագրի արտաքին բաղադրիչը առոչինչ է համարվում, և կիրառվում են 44-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ պարբերությունները:

ԳԼՈՒԽ III

ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

ՄԱՍ 1

Համատեղ դիտանցման կոմիտեն

Հոդված 11

Համատեղ դիտանցման կոմիտեի կազմը

1. Համատեղ դիտանցման կոմիտեն կազմված է յուրաքանչյուր մասնակից երկրի կողմից համատեղ գործառնական ծրագրին վերաբերող որոշումները՝ կոմիտեի իրավասության շրջանակներում ընդունելու նպատակով նշանակված ներկայացուցիչներից: Անդամները նշանակվում են որպես իրենց երկրների ներկայացուցիչներ՝ որպես պաշտոնատար անձ, այլ ոչ թե անհատ: Կոմիտեի կազմում պետք է նաև լինեն նախագահ և քարտուղար: Քարտուղարն ընտրվում է Համատեղ ղեկավարման մարմնի անդամներից:

2. Բացի պատշաճ կերպով նշանակված ներկայացուցիչներից՝ անհրաժեշտ է, որ մասնակից երկրներն ապահովեն քաղաքացիական հասարակության (տեղական մարմիններ, տնտեսական և սոցիալական գործընկերներ, քաղաքացիական հասարակություն) բավարար մասնակցությունը՝ ապահովելու համար տեղի տարբեր շահագրգիռ կողմերի սերտ համագործակցությունը համատեղ գործառնական ծրագրի իրականացման ընթացքում:

3. Հանձնաժողովը Համատեղ դիտանցման կոմիտեի յուրաքանչյուր հանդիպմանը հրավիրվում է մասնակիցների հետ միաժամանակ և տեղեկացվում քննարկումների արդյունքների մասին: Այն կարող է իր նախաձեռնությամբ մասնակցել կոմիտեի բոլոր հանդիպումներին կամ յուրաքանչյուր հանդիպման մի մասին՝ որպես դիտորդ՝ առանց որոշումների ընդունմանը մասնակցելու իրավասության:

Հոդված 12

Համատեղ դիտանցման կոմիտեի գործունեությունը

1. Համատեղ դիտանցման կոմիտեի նշանակված անդամները միաձայն ընդունում են կոմիտեի ընթացակարգային կանոնները:

2. Համատեղ դիտանցման կոմիտեն որոշումներն ընդունում է ընդհանուր համաձայնությամբ: Այնուամենայնիվ, այն կարող է որոշ որոշումներ դնել քվեարկության, մասնավորապես այն որոշումները, որոնք վերաբերում են նախագծերի վերջնական ընտրությանը և դրանց հատկացվող դրամաշնորհային գումարներին: Այդ քվեարկության ընթացքում յուրաքանչյուր երկիր ունի միայն մեկ ձայնի իրավունք՝ անկախ իր ներկայացուցիչների թվից:

3. Նշանակված ներկայացուցիչներն ընտրում են նախագահ: Կոմիտեն կարող է որպես նախագահ ընտրել Համատեղ ղեկավարման մարմնի ներկայացուցիչներից կամ մեկ այլ անձի:

Համատեղ ղիտանցման կոմիտեի նախագահը հանդես է գալիս որպես արբիտր և վարում քննարկումները: Նախագահը պահպանում է իր ձայնի իրավունքը, բացառությամբ եթե նախագահի պաշտոնում ընտրվել է Համատեղ ղեկավարման մարմնի ներկայացուցիչ կամ այլ անձ: Վերջին ղեկքում նախագահը ձայնի իրավունք չունի:

4. Համատեղ ղիտանցման կոմիտեն հանդիպում է ըստ անհրաժեշտության, սակայն, տարին առնվազն մեկ անգամ: Հանդիպումը հրավիրվում է Կոմիտեի նախագահի կողմից՝ Համատեղ ղեկավարման մարմնի պահանջով կամ նշանակված որևէ անդամի կամ Հանձնաժողովի կողմից ներկայացված՝ պատշաճ կերպով հիմնավորված պահանջի դեպքում: Այն կարող է նաև որոշումներ ընդունել գրավոր կարգով՝ նախագահի, Համատեղ ղեկավարման մարմնի կամ մասնակից որևէ պետության նախաձեռնությամբ: Անհամաձայնության դեպքում՝ ցանկացած անդամ կարող է պահանջել, որ որոշումը քննարկվի հանդիպման ընթացքում:

5. Համատեղ ղիտանցման կոմիտեի յուրաքանչյուր հանդիպումից հետո կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են նախագահը և քարտուղարը: Արձանագրությունը տրվում է կոմիտեի բոլոր անդամներին և Հանձնաժողովին:

Հոդված 13

Համատեղ ղիտանցման կոմիտեի գործառույթները

Որպես համատեղ գործառնական ծրագրի հետ կապված իր գործառույթների մաս, կոմիտեն՝

ա) հաստատում է Համատեղ ղեկավարման մարմնի աշխատանքային ծրագիրը:

բ) որոշում է ընդունում տեխնիկական աջակցությանը և մարդկային ռեսուրսներին տրամադրվող՝ ծրագրի միջոցների ծավալի և բաշխման մասին,

գ) յուրաքանչյուր հանդիպման ժամանակ վերանայում է կառավարմանը վերաբերող որոշումները, որոնք ընդունվել են Համատեղ ղեկավարման մարմնի կողմից:

դ) նշանակում է նախագծեր ընտրելու համար պատասխանատու կոմիտեններ:

ե) որոշում է ընդունում նախագծերի ընտրության չափորոշիչների մասին, ինչպես նաև վերջնական որոշում է կայացնում նախագծերի և դրանց հատկացվող գումարների մասին:

զ) յուրաքանչյուր հանդիպման ընթացքում Համատեղ ղեկավարման մարմնի կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա գնահատում և ղիտանցում է համատեղ գործառնական ծրագրի նպատակների իրագործման ուղղությամբ առաջընթացը:

ե) վերանայում է Համատեղ ղեկավարման մարմնի ներկայացրած բոլոր զեկույցները և, հարկ եղած դեպքում, ձեռնարկում համապատասխան միջոցներ:

ը) քննում է Համատեղ ղեկավարման մարմնի կողմից իր ուշադրությանը ներկայացված՝ գումարների վերադարձման հետ կապված վիճելի գործերը:

Եթե առաջին պարբերության (ե) կետում նշված որոշումներն ընդունելիս Համատեղ ղիտանցման կոմիտեն որոշում է չհետևել ընտրող կոմիտեի ոչ մի առաջարկության կամ որոշ առաջարկությունների, այն գրավոր հիմնավորում է իր որոշումը:

Այնուհետև այդ որոշումը Համատեղ ղեկավարման մարմնի միջոցով ուղարկվում է Հանձնաժողովի նախնական հաստատմանը: Հանձնաժողովն իր եզրակացությունը ներկայացնում է Համատեղ ղեկավարման մարմնին 15 աշխատանքային օրվա ընթացքում:

Համատեղ ղեկավարման մարմնի պարտականություններն իրականացվում են գործող կանոնակարգերին և դրույթներին համապատասխան: Համատեղ ղեկավարման մարմինը պետք է ապահովի, որպեսզի Համատեղ ղիտանցման կոմիտեի որոշումները համապատասխանեն այդ կանոններին:

ՄԱՍ 2

Համատեղ ղեկավարման մարմինը

Հոդված 14

Համատեղ ղեկավարման մարմնի գործունեության կազմակերպումը

1. Համատեղ ղեկավարման մարմինը սովորաբար իրենից ներկայացնում է պետական հատվածի՝ ազգային, տարածքային կամ տեղական մարմին: Համատեղ ղեկավարման մարմինը կարող է նաև լինել մասնավոր իրավունքի սուբյեկտ՝ օժտված հանրային ծառայությունների մատուցման առաքելությամբ:

Այդ մարմինը պետք է բավարարի անհրաժեշտ ֆինանսական պահանջները և համապատասխանի Խորհրդի (ԵՀ, Եվրատոմ) թիվ 1605/2002 կանոնակարգով [3], մասնավորապես, դրա 54-րդ հոդվածով, ինչպես նաև Հանձնաժողովի (ԵՀ, Եվրատոմ) թիվ 2342/2002 կանոնակարգով, մասնավորապես, դրա 38-րդ, 39-րդ և 41-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին [4]:

2. Մասնակից երկրները Համատեղ ղեկավարման մարմնին են վերապահում համատեղ գործառնական ծրագրի իրականացման հետ կապված այն խնդիրները, որոնք վերապահվել են իրենց՝ որպես ծրագրի կառավարման մաս: Համատեղ ղիտանցման կոմիտեի շրջանակներում նրանք պատասխանատու են միջոցների՝ ծրագրի կառավարումը կարգավորող կանոններին և սկզբունքներին համապատասխան օգտագործումն ստուգելու համար:

3. Համատեղ ղեկավարման մարմնի գործունեությունը կարող է ֆինանսավորվել Համայնքի կողմից տեխնիկական աջակցությանը տրամադրվող օժանդակությունից, ինչպես նաև համաֆինանսավորումից, մասնավորապես, 19(3) հոդվածով սահմանված բնախրային օժանդակությունից:

4. Համատեղ ղեկավարման մարմնի կողմից սահմանված հաշիվները ենթարկվում են փաստացի (ex post) արտաքին աուդիտի, որն իրականացվում է 31-րդ հոդվածում նշված անկախ կազմակերպության կողմից:

5. Համատեղ ղեկավարման մարմնի գործունեությունը կազմակերպելիս հիմք է ընդունվում կառավարման և ներքին հսկողության միջազգային լավագույն փորձը և հաշվի են առնվում կառավարման ու ներքին հսկողության այն համակարգերը, որոնք համապատասխանում են իր խնդիրներն այնպես իրականացնելուն, որպեսզի ապահովվի իր գործողությունների համապատասխանությունը իրավական ակտերին, այլ կանոններին և պատշաճ ֆինանսական կառավարման սկզբունքին:

Մասնավորապես, Համատեղ ղեկավարման մարմնի շրջանակներում գործառնական և ֆինանսական կառավարման գործառույթները տարանջատվում են: Թույլտվություններ տվող պաշտոնատար անձի և հաշվապահի գործառույթները տարանջատվում են և երկուստեք անհամատեղելի են:

6. Համատեղ ղեկավարման մարմինը պետք է ունենա ներքին աուդիտի ծառայություն, որը պետք է անկախ լինի թույլտվություններ տվող պաշտոնատար անձի, հաշվապահի և կառավարման գործառույթներ իրականացնող բաժիններից:

7. Համատեղ ղեկավարման մարմինը կիրառում է ընթացակարգեր՝ ծրագրով նախատեսված ծախսերի իսկությունը և օրինականությունն ապահովելու համար, և ստեղծում է հաշվապահական հաշվառման, դիտանցման և ֆինանսական տեղեկատվական վստահելի համակարգչայնացված համակարգեր:

8. Համատեղ ղեկավար մարմինը, մասնավորապես, պետք է պահպանի այն դրամաշնորհային համաձայնագրերի և գնման պայմանագրերի պայմաններն ու վճարումների վերջնաժամկետները, որոնք այն ստորագրում է երրորդ անձանց հետ: Օգտագործելով ստուգման համար անհրաժեշտ ընթացակարգեր՝ այն ապահովում է, որ դրամաշնորհային համաձայնագրերով կամ գնման պայմանագրերով վճարված գումարները ծախսվեն միայն ըստ դրանց տրամադրման նպատակի:

Հաշիվների կառավարման և դրամաշնորհների ու պայմանագրերի վարչական և ֆինանսական դիտանցման նպատակով օգտագործվում է ընդհանուր համակարգ (նամակագրություն, հանդիպումներին հաջորդող նամակներ կամ հիշեցումներ, հաշվետվությունների ստացում և այլն):

9. Համատեղ ղեկավարման մարմինն անհապաղ ծանուցում է Հանձնաժողովին և Համատեղ դիտանցման կոմիտեին իր ընթացակարգերում կամ գործունեության կազմակերպման գործընթացում կատարված ցանկացած փոփոխության կամ որևէ այլ հանգամանքի մասին, որը կարող է ազդել ծրագրի իրականացման վրա:

10. Համատեղ ղեկավարման մարմինը և տարբեր շահառուներ, կատարողներ և գործընկերներ, որոնց հետ այդ մարմինը նախագծերի իրականացման համար պայմանագրեր է կնքում, ենթակա են ստուգումների Հանձնաժողովի, Աուդիտորների եվրոպական դատարանի և Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակի (ԽՊԵԳ) կողմից:

Հոդված 15

Համատեղ ղեկավարման մարմնի գործառույթները

1. Համատեղ ղեկավարման մարմինը պատասխանատու է համատեղ գործառնական ծրագիրը, ներառյալ տեխնիկական աջակցությունը՝ պատշաճ ֆինանսական կառավարման սկզբունքին և տնտեսման ու տնտեսական և նպատակային արդյունավետության սկզբունքներին համապատասխան կառավարելու և իրականացնելու համար և պետք է իրականացնի անհրաժեշտ բոլոր ստուգումները, որոնք անհրաժեշտ են համապատասխան կանոնակարգերով նախատեսված կանոնների ու ընթացակարգերի համաձայն:

2. Համատեղ ղեկավարման մարմնի տարբեր խնդիրները ներառում են՝

ա) Համատեղ դիտանցման կոմիտեի հանդիպումները կազմակերպելը և դրանցում որպես քարտուղարություն հանդես գալը, ներառյալ հանդիպումների արձանագրությունները կազմելը.

բ) ծրագրի մանրամասն տարեկան բյուջեներ և Հանձնաժողովին ուղղված վճարման պահանջագրեր պատրաստելը.

գ) տարեկան գործառնական և ֆինանսական հաշվետվություններ կազմելն ու Համատեղ դիտանցման կոմիտեին և Հանձնաժողովին ուղարկելը.

դ) ներքին աուդիտորական ծառայության միջոցով աուդիտորական ծրագիր իրականացնելը՝ ստուգելու ներքին շրջանառությունը և ապահովելու ընթացակարգերի պատշաճ կիրառումը Համատեղ ղեկավարման մարմնի շրջանակներում. ներքին աուդիտորական տարեկան հաշվետվություններն ուղարկվում են Համատեղ դիտանցման կոմիտեին և Հանձնաժողովին.

ե) Համատեղ դիտանցման կոմիտեի հաստատումից հետո մրցույթների հրավերներ և հայտերի հրավերներ ներկայացնելը՝ նախագծերի ընտրության նպատակով.

զ) նախագծերի հայտեր ընդունելը, ընտրող կոմիտեներ կազմակերպելը, նախագահելը և որպես դրանց քարտուղարություն հանդես գալը, ինչպես նաև Համատեղ դիտանցման կոմիտեին և Հանձնաժողովին զեկույցներ՝ ներառյալ ընտրող կոմիտեի առաջարկություններն ուղարկելը.

է) Համատեղ դիտանցման կոմիտեի կողմից նախագծերի ընտրությանը հետևելը, տարբեր նախագծերի համար շահառուների և կատարողների հետ պայմանագրեր ստորագրելը.

ը) նախագծերի կատարմանը հետևելը և ֆինանսական կառավարումը.

թ) Համատեղ դիտանցման կոմիտեին միջոցների վերադարձման բոլոր վիճելի գործերի մասին անմիջապես ծանուցելը.

ժ) ծրագրի մակարդակում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ուսումնասիրություններ իրականացնելը.

ժա) 42-րդ հոդվածին համապատասխան տեղեկատվական և տեսանելիության ապահովմանն ուղղված պլանն իրականացնելը:

Հոդված 16

Համատեղ տեխնիկական քարտուղարությունը

1. Յուրաքանչյուր Համատեղ ղեկավարման մարմին, Համատեղ դիտանցման կոմիտեի նախնական համաձայնությամբ, կարող է օգտվել Համատեղ տեխնիկական քարտուղարության ծառայություններից, որն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ օժանդակելու այդ մարմնին համատեղ գործառնական ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունների ամենօրյա կառավարման հարցում:

Համատեղ տեխնիկական քարտուղարության գործունեությունը ֆինանսավորվում է տեխնիկական աջակցության բյուջեից:

2. Համատեղ տեխնիկական քարտուղարությունը, անհրաժեշտության դեպքում, կարող է հիմնել փոքր մասնաճյուղային գրասենյակներ մասնակից երկրներում՝ նպատակ հետապնդելով այդ երկրների հնարավոր շահառուներին տեղեկացնել ծրագրով նախատեսված գործողությունների մասին:

Հոդված 17

Շարունակականության սկզբունքը

Եթե գոյություն ունեցող Համատեղ ղեկավարման մարմինը, որն ունի նախորդ կամ ընթացիկ ծրագրերի կառավարման՝ Հանձնաժողովի կողմից հաստատված համակարգեր, վերանշանակվում է՝ համատեղ գործառնական ծրագրի կառավարելու նպատակով, ապա անհրաժեշտ չէ փոփոխություններ կատարել այդ Համատեղ ղեկավարման մարմնի գործունեության կազմակերպման կարգերում՝ պայմանով, որ կիրառվող համակարգերը բավարարում են սույն Կանոնակարգի պահանջները:

ԳԼՈՒԽ IV

ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ՄԱՍ 1

Ֆինանսավորումը

Հոդված 18

Համայնքի կողմից ֆինանսավորվող տեխնիկական աջակցությունը

Տեխնիկական աջակցությանը կարող է հատկացվել համատեղ գործառնական ծրագրին Համայնքի կողմից տրամադրվող ընդհանուր օժանդակության 10 %-ից ոչ ավելին:

Այնուամենայնիվ, առանձին դեպքերում և ելնելով ծրագրի իրականացման նախորդ տարիների ծախսերի մակարդակից և ծրագրի հիմնավորված պահանջների կանխատեսումներից, ծրագրին նախապես հատկացված տեխնիկական աջակցության գումարի ավելացման հարցը կարող է քննարկման առարկա դառնալ:

Հոդված 19

Համաֆինանսավորման աղբյուրները

1. Ծրագրերը համաֆինանսավորվում են յուրաքանչյուր համատեղ գործառնական ծրագրի մասնակից երկրների կամ սուբյեկտների սեփական ռեսուրսներից:
2. Յուրաքանչյուր գործառնական ծրագրի շրջանակներում՝ մասնակից երկրները կարող են իրենց հայեցողությամբ որոշել համաֆինանսավորման աղբյուրը, չափը և բաշխումը՝ ըստ նպատակների և գերակայությունների:
3. Համատեղ ղեկավարման մարմնի կողմից հատկացվող բնափրային օժանդակությունը կարող է համարվել համաֆինանսավորում՝ Հանձնաժողովի նախնական հաստատման պայմանով: Այդ դեպքում դրանք պետք է հստակորեն նշվեն ծրագրի փաստաթղթում:

Հոդված 20

Համաֆինանսավորման տոկոսադրույքը

1. Համաֆինանսավորումը կազմում է համատեղ գործառնական ծրագրին Համայնքի կողմից ցուցաբերվող օժանդակության առնվազն 10 %-ը, որն իր մեջ չի ներառում Համայնքի կողմից ֆինանսավորվող տեխնիկական աջակցության գումարը:
2. Ըստ հնարավորության՝ համաֆինանսավորումը բաշխվում է հավասարաչափ՝ ծրագրի տևողության ընթացքում այնպես, որ 10 %-ի չափով նախատեսված նվազագույն համաֆինանսավորումն ապահովվի մինչև ծրագրի ավարտը:

Հողված 21

Համատեղ գործառնական ծրագրի բանկային հաշիվը և նախաֆինանսավորման տոկոսավճարը

1. Հատուկ ծրագրի համար բացվում է առանձին բանկային հաշիվ եվրոյով, որը կառավարվում է Համատեղ ղեկավարման մարմնի շրջանակներում հաշվապահական գործառույթներ իրականացնող ծառայության կողմից: Պետք է բացվի այնպիսի հաշիվ, որ գործարքների համար միաժամանակ պահանջվեն թույլտվություններ տվող պաշտոնատար անձի և հաշվապահի ստորագրությունները:

2. Եթե բանկային հաշվի վրա կուտակվում են տոկոսներ, նախնական ֆինանսավորման վճարներից գոյացած տոկոսները փոխանցվում են համատեղ գործառնական ծրագրին, և այդ մասին տեղեկացվում է Հանձնաժողովը՝ 32-րդ հոդվածում նշված վերջնական զեկույցում:

Հողված 22

Համատեղ գործառնական ծրագրի հաշիվները

Համատեղ գործառնական ծրագրի հաշիվները բացվում են Համատեղ ղեկավարման մարմնի կազմում գործող՝ ֆինանսական գործարքների համար պատասխանատու ծառայության կողմից: Այս հաշիվներն անկախ են ու առանձնացված և դրանց միջոցով կատարվում են միայն համատեղ գործառնական ծրագրին առնչվող գործարքներ: Դրանք վարվում են այնպես, որ հնարավոր լինի իրականացնել ծրագրի վերլուծական դիտանցում՝ ըստ նպատակի, գերակայության և միջոցառման:

Համատեղ ղեկավարման մարմինը տարեկան զեկույցին և լրացուցիչ նախնական ֆինանսավորման համար ցանկացած հայտին կից Համատեղ դիտանցման կոմիտեին է ներկայացնում հաշվետվություններ, որոնց համաձայն այդ հաշիվներում առկա միջոցները չեն գերազանցում ծրագրի բանկային հաշվի մնացորդը:

Հողված 23

Պայմանագրային ընթացակարգերը

1. Համատեղ ղեկավարման մարմնի կողմից համատեղ գործառնական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ գնման պայմանագրերի և դրամաշնորհների պայմանագրային ընթացակարգերը Խորհրդի (ԵՀ, Եվրատոմ) թիվ 1605/2002 կանոնակարգի 162-170-րդ հոդվածներով և Հանձնաժողովի (ԵՀ, Եվրատոմ) թիվ 2342/2002 կանոնակարգի 231-256-րդ հոդվածներով սահմանված՝ արտաքին գործողությունների նկատմամբ կիրառվող ընթացակարգերն են:

Կիրառվող ընթացակարգերը, համապատասխան օրինակելի փաստաթղթերը և պայմանագրի ձևերը ներառված են ԵՀ արտաքին գործողությունների պայմանագրային ընթացակարգերի Գործնական ուղեցույցում և դրա այն

հավելվածներում, որոնք գործում են գնման ընթացակարգերի մեկնարկի կամ հայտերի հրավերներ ներկայացնելու պահին:

2.

Մրցույթի և հայտերի հրավերներին մասնակցելու համար համապատասխանելիության կանոնները (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի 14-րդ հոդվածով նախատեսված կանոններն են՝ սույն Կանոնակարգի 40-րդ և 41-րդ հոդվածների դրույթների պահպանմամբ:

3. Այդ դրույթները գործում են ծրագրի ամբողջ աշխարհագրական տարածքում՝ թե՛ անդամ պետությունների և թե՛ գործընկեր երկրների տարածքում:

ԲԱԺԻՆ 2

Վճարումները

Հոդված 24

Հանձնաժողովի՝ հատկացումների գծով տարեկան պարտավորությունները

Համատեղ գործառնական ծրագիրը հաստատելու մասին որոշմանը զուգահեռ ստանձնած՝ հատկացումների գծով նախնական պարտավորությունից բացի՝ Հանձնաժողովն ամեն տարի համապատասխան պարտավորությունը ստանձնում է ոչ ուշ, քան տվյալ տարվա մարտի 31-ը: Այդ պարտավորության գումարը որոշվում է համատեղ գործառնական ծրագրի տարեկան նախնական հատկացումները մանրամասն ներկայացնող ֆինանսական աղյուսակին համապատասխան, ինչպես նաև՝ կախված ծրագրի արձանագրած առաջընթացից և միջոցների առկայությունից: Հանձնաժողովը Համատեղ ղեկավարման մարմնին տեղեկացնում է տարեկան պարտավորությունն ստանձնելու ստույգ օրվա մասին:

Հոդված 25

Վճարումների ընդհանուր կանոնները

1. Հանձնաժողովը յուրաքանչյուր վճարում կատարում է Համայնքի կողմից տրամադրված օժանդակությունից՝ ըստ միջոցների առկայության: Համատեղ ղեկավարման մարմնին ուղղված ցանկացած վճարում Հանձնաժողովն անմիջապես մասհանում է տարեկան պարտավորության ամենավաղ տրանշից՝ մինչև այդ պարտավորության ամբողջ գումարի ծախսվելը: Երբ ամենավաղ տարեկան պարտավորության տրանշը ամբողջովին ծախսվում է, կարող է օգտագործվել տարեկան պարտավորության հաջորդ տրանշը:

2. Վճարումները կատարվում են եվրոյով՝ համատեղ գործառնական ծրագրի բանկային հաշվին:

3. Վճարումները կարող են կատարվել նախնական ֆինանսավորման ձևով կամ վերջնական հաշվեկշռի հիման վրա:

Հոդված 26

Նախնական ֆինանսավորումը

1. Յուրաքանչյուր տարի, երբ Համատեղ ղեկավարման մարմինը ծանուցվում է բյուջետային պարտավորությունների մասին, այն կարող է պահանջել, որ Համայնքի կողմից տրամադրվող օժանդակության մինչև 80 %-ը փոխանցվի տվյալ տարվա բյուջե՝ որպես նախնական ֆինանսավորում:

Համատեղ գործառնական ծրագրի երկրորդ տարվանից սկսած՝ նախնական ֆինանսավորման մասին դիմումներին կից ներկայացվում են նախնական տարեկան ֆինանսական հաշվետվություն, որը պետք է ներառի տարեկան արտաքին աուդիտորական հաշվետվությամբ դեռևս չհաստատված՝ նախորդ տարվա բոլոր ծախսերը և հասույթը, և նախնական բյուջե, որը մանրամասնում է հաջորդ տարվա համար Համատեղ ղեկավարման մարմնի՝ հատկացումների գծով պարտավորությունները և վճարումները:

Այդ հաշվետվությունը վերանայելուց, ծրագրի իրական ֆինանսական կարիքները գնահատելուց և միջոցների առկայությունը ստուգելուց հետո Հանձնաժողովը կատարում է վճարում՝ պահանջվող նախնական ֆինանսավորման ամբողջ գումարի կամ դրա մի մասի չափով:

2. Տարվա ընթացքում Համատեղ ղեկավարման մարմինը կարող է հայցել Համայնքի կողմից տրամադրվող տարեկան օժանդակության մնացորդի փոխանցումը ամբողջությամբ կամ մասամբ՝ որպես լրացուցիչ նախնական ֆինանսավորում:

Որպես իր պահանջի հիմնավորում՝ Համատեղ ղեկավարման մարմինը ներկայացնում է միջանկյալ ֆինանսական հաշվետվություն, որի համաձայն փաստացի կատարված կամ մինչև տարվա վերջ նախատեսվող ծախսերը գերազանցում են արդեն տրամադրված նախնական ֆինանսավորման գումարը:

Հետագայում իրականացվող նման փոխանցումները համարվում են լրացուցիչ նախնական ֆինանսավորում, քանի դեռ դրանք չեն հաստատվում արտաքին աուդիտորական հաշվետվությամբ:

3. Ծրագրի իրականացման յուրաքանչյուր տարվա երկրորդ կեսին Հանձնաժողովը կատարում է նախնական ֆինանսավորման նախորդ վճարումների հաշվանցում՝ փաստացի իրականացված թույլատրելի ծախսերի հիման վրա, ինչպես հաստատված է 31-րդ հոդվածում նշված արտաքին աուդիտորական տարեկան հաշվետվությամբ:

Հաշվանցման արդյունքների հիման վրա Հանձնաժողովը կարող է կիրառել անհրաժեշտ ֆինանսական համահարթեցում:

Միջոցների վերադարձը

1. Համատեղ ղեկավարման մարմինը պատասխանատու է ցանկացած չհիմնավորված կամ անթույլատրելի ծախսերի վերադարձման և Հանձնաժողովին իր մասնաբաժինը կամ վերադարձված գումարները հատուցելու համար՝ ծրագրին նրա տրամադրած օժանդակության համամասնությամբ:

Եթե որևէ պայմանագրի վերաբերյալ վերջնական զեկույցն ստանալուց հետո կամ հսկողության կամ աուդիտի արդյունքում հայտնաբերվում է անթույլատրելի ծախս, որի վճարումն արդեն կատարվել է, Համատեղ ղեկավարման մարմինը վերադարձման պահանջներ է ներկայացնում համապատասխան շահառուներին կամ կատարողներին:

2. Եթե վերադարձման պահանջը վերաբերում է անդամ պետությունում տնտեսական գործունեություն իրականացնող շահառուին, կատարողին կամ գործընկերոջը, իսկ Համատեղ ղեկավարման մարմինը չի կարողանում վերադարձնել պարտքը վերադարձման պահանջը ներկայացնելուց հետո մեկ տարվա ընթացքում, ապա անդամ պետությունը, որտեղ շահառուն, կատարողը կամ գործընկերը տնտեսական գործունեություն են իրականացնում, վճարում է Համատեղ ղեկավարման մարմնին վճարման ենթակա գումարը և այն հետ է պահանջում շահառուից, կատարողից կամ գործընկերոջից:

3. Եթե վերադարձման պահանջը վերաբերում է մասնակից երկրում տնտեսական գործունեություն իրականացնող շահառուին, կատարողին կամ գործընկերոջը, իսկ Համատեղ ղեկավարման մարմինը չի կարողանում վերադարձնել պարտքը վերադարձման պահանջը ներկայացնելուց հետո մեկ տարվա ընթացքում, ապա Համատեղ ղեկավարման մարմինը գործն ուղարկում է Հանձնաժողովին, որը, ամբողջական գործի հիման վրա, զբաղվում է վճարման ենթակա գումարները՝ գործընկեր երկրում տնտեսական գործունեություն իրականացնող շահառուից, կատարողից կամ գործընկերոջից կամ անմիջականորեն այդ երկրի պետական իշխանություններից վերադարձնելու խնդրով:

4. Անդամ պետություն կամ Հանձնաժողովին ուղարկված գործերը պետք է պարունակեն վերադարձման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը, ինչպես նաև վճարման ենթակա գումարների վերադարձման նպատակով Համատեղ ղեկավարման մարմնի կողմից շահառուի կամ կատարողի նկատմամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ ապացույցներ:

5. Համատեղ ղեկավարման մարմինը պետք է գործադրի պատշաճ ջանասիրություն վերադարձման պահանջ ներկայացնելուց հետո մեկ տարվա ընթացքում հատուցումն ապահովելու համար: Մասնավորապես, այն ապահովում է, որ պահանջը որոշակի է, պարունակում է ֆիքսված գումար և ենթակա է վճարման: Եթե Համատեղ ղեկավարման մարմինը նախատեսում է հրաժարվել հաստատված պարտքը վերադարձնելուց, այն ապահովում է, որ հրաժարումն իրականացվի սահմանված

կարգով և համապատասխանի պատշաճ ֆինանսական կառավարման և համաչափության սկզբունքներին: Հրաժարման մասին որոշումը պետք է հիմնավորված լինի և ներկայացվի Հանձնաժողովի և Համատեղ դիտանցման կոմիտեի նախնական հաստատմանը:

6. Եթե պարտքը չի վերադարձվել կամ 4-րդ պարբերությունում նշված ամբողջական գործը չի փոխանցվել անդամ պետությանը կամ Հանձնաժողովին Համատեղ ղեկավարման մարմնի անզուշտության հետևանքով, ապա մեկ տարին լրանալուց հետո Համատեղ ղեկավարման մարմինը շարունակում է պատասխանատու լինել գումարների վերադարձման համար, իսկ վճարման ենթակա գումարները հայտարարվում են որպես Համայնքի կողմից ֆինանսավորման ոչ ենթակա:

7. Համաձայն 2-րդ և 3-րդ պարբերությունների՝ որպես ծրագրի մաս Համատեղ ղեկավարման մարմնի կողմից կնքված պայմանագրերը պետք է պարունակեն դրույթ, որը թույլ է տալիս Հանձնաժողովին կամ համապատասխան անդամ պետությանը գումարների վերադարձ պահանջել շահառուից, կատարողից կամ գործընկերոջից, եթե պահանջը դեռ առկա է Համատեղ ղեկավարման մարմնի կողմից վերադարձման պահանջ ներկայացնելուց մեկ տարի հետո:

ՄԱՍ 3

Զեկույցները

Հոդված 28

Համատեղ ղեկավարման մարմնի տարեկան զեկույցները

1. Ամեն տարի ամենաուշը մինչև հունիսի 30-ը Համատեղ ղեկավարման մարմինը Հանձնաժողովին է ներկայացնում նախորդ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը համատեղ գործառնական ծրագրի իրականացման մասին տարեկան զեկույց՝ հաստատված Համատեղ դիտանցման կոմիտեի կողմից և վավերացված 31-րդ հոդվածում նշված աուդիտորական հաշվետվությամբ: Առաջին տարեկան զեկույցը ներկայացվում է մինչև ծրագրի երկրորդ տարվա հունիսի 30-ը:

2. Յուրաքանչյուր տարեկան զեկույց պարունակում է՝

ա) տեխնիկական մաս, որտեղ ներկայացվում են՝

– ծրագրի իրականացման ընթացքում արձանագրված առաջընթացը և ծրագրի գերակայությունները.

– ստորագրված պայմանագրերի մանրամասն ցանկը, ինչպես նաև հանդիպած հնարավոր դժվարությունները.

– նախորդ տարվա ընթացքում իրականացված տեխնիկական աջակցության գործողությունները.

– նախագծերը դիտանցելու, գնահատելու և աուդիտի ենթարկելու նպատակով ձեռնարկված միջոցները, դրանց արդյունքները, ինչպես նաև հայտնաբերված խնդիրները վերացնելու նպատակով ձեռնարկված գործողությունները.

– տեղեկատվական և հաղորդակցության գործողությունները.

– հաջորդ տարի իրականացվելիք գործողությունների ծրագիրը.

բ) յուրաքանչյուր գերակայությանը հատկացվող ֆինանսական մասնաբաժինը՝ եվրոյով.

– Հանձնաժողովի կողմից որպես Համայնքի կողմից ցուցաբերվող օժանդակություն և մասնակից երկրների կողմից որպես համաֆինանսավորում Համատեղ ղեկավարման մարմնին հատկացված գումարները, ինչպես նաև ծրագրի ցանկացած այլ հնարավոր հասույթ.

– տեխնիկական աջակցության և նախագծերի նպատակով Համատեղ ղեկավարման մարմնի կողմից կատարված վճարումները և վերադարձված գումարները, ինչպես նաև հաշվետվությունը, ըստ որի դրանք չեն գերազանցում ծրագրի բանկային հաշվի մնացորդը.

– նախագծերի շրջանակներում առաջացած թույլատրելի ծախսերի գումարը, ինչպես ներկայացված է շահառուների զեկույցներում և վճարման մասին դիմումներում.

– հաջորդ տարվա համար Համատեղ ղեկավարման մարմնի նախնական բյուջեն (հատկացումների գծով պարտավորություններ և ծախսեր).

գ) Համատեղ ղեկավարման մարմնի ներկայացուցչի կողմից ստորագրված հայտարարություն, որը հաստատում է, որ նախորդ տարվա ընթացքում ծրագրով ներդրված ղեկավարման և հսկողության համակարգերը շարունակում են համապատասխանել Հանձնաժողովի կողմից հաստատված մոդելին, և որ դրանք կիրառվել են այնպես, որ երաշխավորվի վստահության բավարար աստիճան՝ ֆինանսական հաշվետվության ճշգրտության և դրանում ներառված գործարքների օրինականության ու սահմանված պահանջներին համապատասխանության առումով:

Հոդված 29

Ներքին աուդիտորական ծառայության տարեկան հաշվետվությունը

1. Համատեղ ղեկավարման մարմնի ներքին աուդիտորական ծառայությունը յուրաքանչյուր տարի իրականացնում է հսկողության ծրագիր՝ ստուգելու ներքին շրջանառությունը և համոզվելու, որ ընթացակարգերը ճիշտ են կիրառվել Համատեղ ղեկավարման մարմնի կողմից: Այն կազմում է տարեկան հաշվետվություն և ուղարկում Համատեղ ղեկավարման մարմնի ներկայացուցչին:

2. Համատեղ ղեկավարման մարմինը 1-ին պարբերությունում նշված հաշվետվությունն ուղարկում է Հանձնաժողովին և Համատեղ դիտանցման կոմիտեին՝ որպես 28-րդ հոդվածում նշված տարեկան զեկույցի հավելված:

Հոդված 30

Նախագծերի աուդիտի պլանի կատարման մասին տարեկան հաշվետվությունը

1. Յուրաքանչյուր տարի Համատեղ ղեկավարման մարմինը կազմում է 37-րդ հոդվածում նշված նախագծերի աուդիտի պլանի՝ նախորդ տարվա կատարողականի մասին հաշվետվություն: Հաշվետվությունում մանրամասն նկարագրվում է նախագծերի տիպային նմուշ ընտրելու համար Համատեղ ղեկավարման մարմնի կողմից կիրառվող մեթոդաբանությունը, ինչպես նաև իրականացված հսկողությունը, համապատասխան նախագծերի ֆինանսական կառավարման վերաբերյալ Համատեղ ղեկավարման մարմնի առաջարկությունները և եզրակացությունները:

2. Համատեղ ղեկավարման մարմինը 1-ին պարբերությունում նշված հաշվետվությունն ուղարկում է Հանձնաժողովին և Համատեղ դիտանցման կոմիտեին՝ որպես 28-րդ հոդվածում նշված զեկույցի հավելված:

Հոդված 31

Արտաքին աուդիտի մասին հաշվետվությունը

1. Անկախ Համատեղ ղեկավարման մարմնի արտաքին աուդիտից՝ իրականացված դրա գործունեության իրականացման երկրի իշխանությունների կողմից, Համատեղ ղեկավարման մարմինը, Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (ՀՄՖ) ստանդարտներին և վարքագծի կանոններին համապատասխան, յուրաքանչյուր տարի Համատեղ ղեկավարման մարմնի կողմից իր տարեկան ֆինանսական հաշվետվությունում ներկայացված եկամուտների և ծախսերի փաստացի (ex post) ստուգում իրականացնելու նպատակով հրավիրում է անկախ պետական մարմին կամ պայմանագիր է կնքում որակավորված անկախ աուդիտորի հետ, որը պարտադիր աուդիտ իրականացնող միջազգայնորեն ճանաչված վերահսկող մարմնի անդամ է:

2. Արտաքին աուդիտի են ենթարկվում Համատեղ ղեկավարման մարմնի՝ տեխնիկական աջակցության և ծրագրի կառավարման գծով ուղղակի ծախսերը (վճարումները): Արտաքին աուդիտի մասին հաշվետվությունը հաստատում է Համատեղ ղեկավարման մարմնի կողմից տարեկան ֆինանսական հաշվետվությունում ներկայացված եկամուտները և ծախսերը և, մասնավորապես, հաստատում է, որ նշված ծախսերն իրականում առաջացել են, ստույգ են և թույլատրելի:

3. Համատեղ ղեկավարման մարմինն արտաքին աուդիտի մասին հաշվետվությունն ուղարկում է Հանձնաժողովին և Համատեղ դիտանցման կոմիտեին՝ որպես 28-րդ հոդվածում նշված տարեկան զեկույցի հավելված:

Հողված 32

Վերջնական գեկույցը

Համատեղ գործառնական ծրագրի իրականացման վերաբերյալ վերջնական գեկույցը պարունակում է տարեկան գեկույցներում զետեղված միևնույն տարրերը՝ համապատասխան փոփոխություններով՝ ներառյալ դրանց հավելվածները՝ ծրագրի ամբողջ տևողության համար: Այն ներկայացվում է ամենաուշը մինչև 2016 թվականի հունիսի 30-ը:

ՄԱՍ 4

Համատեղ գործառնական ծրագրի թույլատրելի ծախսերը

Հողված 33

Համատեղ գործառնական ծրագրի մակարդակում թույլատրելի ծախսերը

1. Համայնքի կողմից ֆինանսավորման ենթակա լինելու համար համատեղ գործառնական ծրագրի ծախսերը պետք է առաջանան ծրագրի կատարման ժամանակահատվածում, ինչպես սահմանված է 43-րդ հոդվածով:

2. Որպեսզի Համատեղ ղեկավարման մարմնի կողմից համատեղ գործառնական ծրագիրն իրականացնելուն վերաբերող ծախսերը համարվեն թույլատրելի՝ որպես տեխնիկական աջակցության ծախսեր, դրանք պետք է՝

ա) անհրաժեշտ լինեն ծրագիրն իրականացնելու համար՝ ծրագրով և Համատեղ դիտանցման կոմիտեի կողմից սահմանված չափորոշիչների պահպանմամբ, և համապատասխանեն սահուն ֆինանսական կառավարման սկզբունքներին, մասնավորապես, գնի և որակի համադրությանն ու ծախսերի արդյունավետությանը.

բ) արձանագրված լինեն ծրագրի հաշիվներում, լինեն բացահայտելի, ստուգելի և ամրագրված օժանդակ փաստաթղթերի բնօրինակներով.

գ) առաջացած լինեն գնումների համապատասխան ընթացակարգերի համաձայն:

3. 1-ին և 2-րդ պարբերությունների դրույթների պահպանմամբ՝ թույլատրելի են հետևյալ ծախսերը՝

ա) ծրագրին կցված անձնակազմի ծախսերը, որոնք պարունակում են փաստացի աշխատավարձերը և սոցիալական ապահովության վճարները, ինչպես նաև վարձատրության հետ կապված այլ ծախսեր: Աշխատավարձերը և ծախսերը չպետք է գերազանցեն այն ծախսերը, որ սովորաբար կրում են Համատեղ ղեկավարման մարմնին կամ Համատեղ տեխնիկական քարտուղարությանն ընդունող կառույցները, եթե հիմնավորված չէ, որ դրանք կենսական նշանակություն ունեն համատեղ գործառնական ծրագրի ընթացքն ապահովելու համար.

բ) անձնակազմի և համատեղ գործառնական ծրագրին մասնակցող այլ անձանց ճանապարհածախսը և օրապահիկը՝ պայմանով, որ դրանք չգերազանցեն այն ծախսերը, որ սովորաբար կրում են ծրագիրը կառավարելու համար նշանակված մարմինները: Օրապահիկի՝ հաստատուն դրույքաչափով հատուցումը չպետք է գերազանցի համատեղ գործառնական ծրագրի ընդունման պահին Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակված սանդղակով սահմանված դրույքաչափերը.

գ) սարքավորումների և պարագաների (նոր կամ օգտագործված) գնման կամ վարձակալման ծախսերը, մասնավորապես, Համատեղ ղեկավարման մարմնի կամ Համատեղ տեխնիկական քարտուղարության կողմից համատեղ գործառնական ծրագրի իրականացման նպատակով, ինչպես նաև ծառայությունների ծախսերը՝ պայմանով, որ դրանք համապատասխանեն շուկայական դրույքաչափերին.

դ) սպառողական առարկաների արժեքը,

ե) վարչական վերադիր ծախսերի գծով անուղղակի ծախսերը.

զ) ենթապայմանագրեր կնքելու գծով ծախսերը.

է) սույն Կանոնակարգով և ծրագրով սահմանված պահանջներից ուղղակիորեն բխող ծախսերը (օրինակ՝ տեղեկատվական և տեսանելիությանն ուղղված միջոցառումներ, գնահատումներ, արտաքին աուդիտ, թարգմանություններ և այլն)՝ ներառյալ ֆինանսական ծառայությունների ծախսերը (մասնավորապես՝ բանկային փոխանցումների ծախսերը):

Հոդված 34

Համատեղ գործառնական ծրագրի մակարդակում չթույլատրվող ծախսերը

Համատեղ ղեկավարման մարմնի կողմից համատեղ գործառնական ծրագրին իրականացնելու հետ կապված հետևյալ ծախսերը չեն համարվում թույլատրելի՝ որպես տեխնիկական աջակցության ծախսեր՝

ա) պարտքերը, ինչպես նաև կորուստների կամ պարտքերի գծով պահուստները.

բ) տոկոսավճարների գծով պարտավորությունները.

գ) այլ ծրագրով արդեն ֆինանսավորվող ծախսերը.

դ) հողի կամ շենքերի ձեռքբերումները.

ե) փոխարժեքի գծով կորուստները.

զ) հարկերը, ներառյալ ԱԱՀ-ն, բացառությամբ եթե Համատեղ ղեկավարման մարմինը չի կարող հետ պահանջել դրանք, և հարկերի ծածկումը թույլատրված է կիրառվող կանոնակարգերով.

է) երրորդ անձանց տրամադրվող վարկերը.

ը) տուգանքները:

Հոդված 35

Համատեղ գործառնական ծրագրի մակարդակում տրամադրվող բնաիրային օժանդակությունը

Մասնակից երկրների կողմից կամ ցանկացած այլ աղբյուրից տրամադրվող բնաիրային օժանդակությունն առանձին նշվում է համատեղ գործառնական ծրագրի բյուջեում և չի համարվում թույլատրելի ծախս:

Դրանք չեն կարող համարվել 20-րդ հոդվածում նշված՝ մասնակից երկրներից պահանջվող՝ 10%-ի չափով նվազագույն համաֆինանսավորման մաս:

Մասնակից երկրների կողմից ծրագրի տեխնիկական աջակցության համար կցված անձնակազմի ծախսերը չեն համարվում բնաիրային օժանդակություն և չեն կարող համարվել համաֆինանսավորում ծրագրի բյուջեում՝ բացառությամբ Համատեղ ղեկավարման մարմնի կողմից ցուցաբերվող սկզբնական բնաիրային օժանդակության՝ նշված սույն Կանոնակարգի 19(3) հոդվածում:

Հոդված 36

Նախագծերի մակարդակում թույլատրելի ծախսերը

1. Յուրաքանչյուր նախագծի համար ծախսերն առաջանում են յուրաքանչյուր համապատասխան պայմանագրի կատարման ժամանակահատվածում:

2. Նախագծի մակարդակում թույլատրելի ու չթույլատրվող ծախսերը և հնարավոր բնաիրային օժանդակությունը նկարագրվում են շահառուների կամ կատարողների հետ կնքված պայմանագրերում:

ՄԱՍ 5

Հսկողությունը

Հոդված 37

Նախագծերի տարեկան աուդիտի պլանը

1. Համատեղ գործառնական ծրագրի իրականացման առաջին տարվա ավարտից սկսած՝ Համատեղ ղեկավարման մարմինն իր կողմից ֆինանսավորվող նախագծերի համար յուրաքանչյուր տարի կազմում է աուդիտի պլան:

2. 1-ին պարբերությունում նշված հսկողությունն իրականացվում է փաստաթղթերի ուսումնասիրման կամ տեղում նախագծերի նմուշի ստուգումներ անցկացնելու միջոցով, որն ընտրվում է Համատեղ ղեկավարման մարմնի կողմից պատահական վիճակագրական ընտրանքի մեթոդով՝ հաշվի առնելով միջազգայնորեն ճանաչված

աուդիտի ստանդարտները, մասնավորապես՝ նախագծերի արժեքի, միջոցառումների տեսակի, շահառուների տեսակի և այլ համապատասխան տարրերի հետ կապված ռիսկի գործոնները: Նմուշը պետք է լինի բավարար չափով ներկայացուցչական ապահովելու վստահության բավարար մակարդակ Համատեղ ղեկավարման մարմնի կողմից՝ նախագծերով նախատեսված ծախսերի առկայության, ճշգրտության և թույլատրելիության մասով իրականացված ուղղակի հսկողության նկատմամբ:

Հոդված 38

Համայնքի կողմից իրականացվող հսկողությունը

Հանձնաժողովը, Խարդախության դեմ պայքարի եվրոպական գրասենյակը, Աուդիտորների եվրոպական դատարանը և այդ կառույցների կողմից լիազորված ցանկացած արտաքին աուդիտոր փաստաթղթերն ուսումնասիրելու կամ տեղում ստուգումների միջոցով կարող են ստուգել, թե ինչպես են Համայնքի միջոցներն օգտագործվում Համատեղ ղեկավարման մարմնի և նախագծի տարբեր շահառուների ու գործընկերների կողմից:

Այդ ստուգումներն իրականացվում են ամբողջական աուդիտի ձևով՝ հաշիվների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և համատեղ գործառնական ծրագրի (ներառյալ՝ Համատեղ ղեկավարման մարմնի դեպքում՝ ընտրության ընթացակարգերին և պայմանագրերին վերաբերող բոլոր փաստաթղթերի) և նախագծի ֆինանսավորմանը վերաբերող ցանկացած այլ օժանդակ փաստաթղթի հիման վրա:

Հոդված 39

Հսկողության ազգային համակարգը

Անդամ պետությունները կարող են ստեղծել հսկողության համակարգ, որը հնարավորություն է տալիս ստուգելու իրենց տարածքում իրականացվող միջոցառումների կամ դրանց մի մասի համար հայտարարված ծախսերի սահունությունը, ինչպես նաև այդ ծախսերի ու դրանց հետ կապված միջոցառումների կամ դրանց մի մասի համապատասխանությունը Համայնքի և ազգային նորմերին:

ԳԼՈՒԽ V

ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ՆԱԽԱԳԾԵՐԸ

Հոդված 40

Համատեղ գործառնական ծրագրերի շրջանակներում իրականացվող նախագծերին մասնակցող սուբյեկտները

1. Նախագծերը ներկայացվում են այն գործընկերությունները ներկայացնող հայտատուների կողմից, որոնց կազմում առկա է ծրագրին մասնակցող անդամ պետությունից և գործընկեր երկրից առնվազն մեկական գործընկեր:

2. 1-ին պարբերությունում նշված հայտատուների և գործընկերների գործունեության իրականացման վայրը 4(ա) և (բ) հոդվածով սահմանված տարածքներում է, և նրանք համապատասխանում են սույն Կանոնակարգի 23(2) հոդվածով սահմանված համապատասխանելիության չափորոշիչներին:

Եթե նախագծերի նպատակները հնարավոր չէ իրագործել առանց այն գործընկերների մասնակցության, որոնց գործունեության իրականացման վայրը 1-ին ենթապարբերությունում նշված տարածքներից բացի այլ տարածքներում է, այդ գործընկերների մասնակցությունը կարող է թույլատրվել:

Հոդված 41

Նախագծերի բնույթը

Այդ նախագծերը կարող են լինել երեք տեսակի՝

ա) ինտեգրված նախագծեր, որոնց դեպքում յուրաքանչյուր գործընկեր համատեղ նախագծի գործողությունների մի մասն է իրականացնում իր տարածքում.

բ) համաչափ (սիմետրիկ) նախագծեր, որոնց դեպքում նմանատիպ գործողություններ անդամ պետություններում և գործընկեր երկրներում իրականացվում են գույզահեռաբար.

գ) հիմնականում կամ ամբողջապես անդամ պետությունում կամ գործընկեր երկրում իրականացվող նախագծեր, որոնք, սակայն, ծառայում են համատեղ գործառնական ծրագրում ներգրավված բոլոր գործընկերների կամ դրանց մի մասի շահերին:

Նախագծերն իրականացվում են սույն Կանոնակարգի 4(ա) և (բ) հոդվածով սահմանված տարածքներում:

Բացառիկ դեպքերում, եթե դա անհրաժեշտ է նախագծերի նպատակներն իրագործելու համար, նախագծերը կարող են մասամբ իրականացվել երկրորդ պարբերությամբ սահմանված տարածքներից բացի այլ տարածքներում:

Հոդված 42

Համատեղ գործառնական ծրագրի տեղեկատվությունը և տեսանելիությունը

1. Համատեղ ղեկավարման մարմինը պատասխանատու է համատեղ գործառնական ծրագրի հետ կապված տեղեկատվական և տեսանելիությանն ուղղված գործողությունների իրականացման համար: Մասնավորապես, Համատեղ ղեկավարման մարմինը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ քայլերը՝ ապահովելու Համայնքի ֆինանսավորման կամ համաֆինանսավորման տեսանելիությունը՝ իր կողմից իրականացվող գործողությունների և ծրագրով ֆինանսավորվող նախագծերի իրականացմանն ուղղված գործողությունների առումով: Նման միջոցները համապատասխանում են արտաքին գործողությունների տեսանելիության

համապատասխան կանոններին, որոնք սահմանվում և հրապարակվում են
Հանձնաժողովի կողմից:

2. Համատեղ տեխնիկական քարտուղարության մասնաճյուղերը, որոնք կարող են
հիմնադրվել մասնակից երկրներում, պատասխանատու են համատեղ գործառնական
ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունների հրապարակայնությունն
ապահովելու և շահագրգիռ ցանկացած անձի տեղեկություններ տրամադրելու
համար:

ԳԼՈՒԽ VI

Համատեղ գործառնական ծրագրերի եզրափակումը

Հոդված 43

Համատեղ գործառնական ծրագրերի տևողությունը

1. Յուրաքանչյուր համատեղ գործառնական ծրագրի կատարման ժամկետը սկսվում է
ամենաշուտը Հանձնաժողովի կողմից համատեղ գործառնական ծրագիրն ընդունելու
օրը և ավարտվում ամենաուշը 2016 թվականի դեկտեմբերի 31-ին:

2. Կատարման այդ ժամկետն ընդգրկում է հետևյալ փուլերը.

ա) համատեղ գործառնական ծրագրի իրականացման փուլ, որը տևում է
առավելագույնը յոթ տարի և ավարտվում ամենաուշը 2013 թվականի դեկտեմբերի
31-ին: Այդ ամսաթվից հետո չեն կարող ներկայացվել մրցույթների կամ հայտերի
հրավերներ և ստորագրվել պայմանագրեր՝ բացառությամբ աուդիտի և գնահատման
պայմանագրերի.

բ) համատեղ գործառնական ծրագրով ֆինանսավորվող նախագծերի իրականացման
փուլ, որն սկսվում է ծրագրի իրականացման փուլի հետ միաժամանակ և ավարտվում
ամենաուշը 2014 թվականի դեկտեմբերի 31-ին: Ծրագրով ֆինանսավորվող
նախագծերի բոլոր գործողություններն ավարտվում են ամենաուշը այդ օրվա
դրությամբ.

գ) համատեղ գործառնական ծրագրի ֆինանսական եզրափակման փուլ, որը
ներառում է ծրագրի շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերի ֆինանսական
եզրափակումը, ծրագրի փաստացի գնահատումը, վերջնական զեկույցի
ներկայացումը և Հանձնաժողովի կողմից կատարվող վերջնական վճարումները կամ
գումարների վերջնական վերադարձը: Այս փուլն ավարտվում է ամենաուշը 2016
թվականի դեկտեմբերի 31-ին:

Ծրագրի վաղաժամկետ դադարեցումը

1. (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի 9(10)(գ) և (դ) հոդվածում ներկայացված, ինչպես նաև պատշաճ կերպով հիմնավորված այլ դեպքերում Հանձնաժողովը կարող է որոշել համատեղ գործառնական ծրագիրը դադարեցնել նախքան կատարման ժամկետի ավարտը՝ Համատեղ դիտանցման կոմիտեի դիմումի համաձայն կամ Համատեղ դիտանցման կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո՝ իր նախաձեռնությամբ:

2. Այս դեպքում Համատեղ ղեկավարման մարմինը դիմումն ուղարկում է Հանձնաժողովին և Հանձնաժողովի որոշումից հետո եռամսյա ժամկետում հանձնում է վերջնական զեկույցը: Նախնական ֆինանսավորման նախորդ վճարների հաշվանցում կատարելուց հետո Հանձնաժողովը վճարում է վերջնական հաշվեկշռային մնացորդը կամ, հարկ եղած դեպքում, Համատեղ ղեկավարման մարմին է ներկայացնում վերջնական վերադարձման պահանջը: Հանձնաժողովը նաև զրոյացնում է միջոցների տրամադրման գծով պարտավորությունների հաշվեկշռային մնացորդը:

3. Եթե ծրագիրը դադարեցվում է այն պատճառով, որ գործընկեր երկրները պահանջվող ժամկետներում չեն ստորագրում ֆինանսավորման համաձայնագրերը, Ֆինանսական հեռանկարի (Միջինստիտուցիոնալ համաձայնագիր 2006/C 139/01) 1Բ տողի համաձայն՝ Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի շրջանակներում միջսահմանային համագործակցությանն ուղղված բյուջետային հատկացումները պահպանվում են իրենց նախատեսված ժամկետով, սակայն դրանք կարող են օգտագործվել միայն համապատասխան անդամ պետություններում իրականացվող գործողությունների համար: Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի շրջանակներում՝ Ֆինանսական հեռանկարի (Միջինստիտուցիոնալ համաձայնագիր 2006/C 139/01) 4-րդ տողով միջսահմանային համագործակցությանն ուղղված հատկացումները զրոյացվում են:

4. Եթե գործընկեր երկրները չեն ստորագրում ֆինանսավորման համաձայնագիրը, կամ Հանձնաժողովը որոշում է համատեղ գործառնական ծրագիրը դադարեցնել՝ նախքան ծրագրի նախատեսված ժամկետը լրանալը, կիրառվում է հետևյալ ընթացակարգը՝

ա) Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի շրջանակներում՝ Ֆինանսական հեռանկարի (Միջինստիտուցիոնալ համաձայնագիր 2006/C 139/01) 1Բ տողով միջսահմանային համագործակցությանն ուղղված հատկացումների դեպքում՝ համապատասխան համատեղ գործառնական ծրագրի գծով հետագա տարեկան պարտավորությունների համար նախատեսված գումարներն օգտագործվում են Տարածաշրջանային զարգացման եվրոպական հիմնադրամի (ՏԶԵՀ) շրջանակում՝ (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի 9(10) հոդվածով նախատեսված կարգով:

բ) Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի շրջանակներում՝ Ֆինանսական հեռանկարների (Միջինստիտուցիոնալ համաձայնագիր 2006/C 139/01)

4-րդ տողով միջսահմանային համագործակցությանն ուղղված հատկացումների դեպքում՝ համապատասխան համատեղ գործառնական ծրագրի գծով հետագա տարեկան պարտավորությունների համար նախատեսված գումարներն օգտագործվում են թիվ (ԵՀ) 1638/2006 կանոնակարգի համաձայն ֆինանսավորման ենթակա այլ ծրագրեր կամ նախագծեր ֆինանսավորելու համար:

Հոդված 45

Փաստաթղթերը պահելը

Համատեղ ղեկավարման մարմինը, ինչպես նաև նախագծի տարբեր շահառուներն ու գործընկերները ծրագրի կամ նախագծի հաշվեկշռային մնացորդը վճարելու օրվանից յոթ տարվա ընթացքում պահում են համատեղ գործառնական ծրագրին կամ նախագծին վերաբերող բոլոր փաստաթղթերը, մասնավորապես՝ զեկույցները և օժանդակ փաստաթղթերը, ինչպես նաև հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման փաստաթղթերը և համատեղ գործառնական ծրագրի (ներառյալ՝ Համատեղ ղեկավարման մարմնի դեպքում՝ ընտրությանը և պայմանագրերին վերաբերող բոլոր փաստաթղթերը) և նախագծի ֆինանսավորմանը վերաբերող ցանկացած այլ փաստաթուղթ:

Հոդված 46

Ծրագրի եզրափակումը

1. Համատեղ գործառնական ծրագիրը համարվում է եզրափակված, երբ՝

ա) ծրագրի շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերը եզրափակվել են.

բ) վերջնական հաշվեկշիռը վճարվել կամ հատուցվել է.

գ) մնացած տեղաբաշխումները զրոյացվել են Հանձնաժողովի կողմից:

2. Գործառնական ծրագրի եզրափակումը չի սահմանափակում Հանձնաժողովի իրավունքը՝ հետագայում ֆինանսական ճշգրտումներ կատարել Համատեղ ղեկավարման մարմնի կամ նախագծի շահառուների նկատմամբ, եթե ծրագրի կամ նախագծերի վերջնական գումարը պետք է փոփոխության ենթարկվի եզրափակման օրվանից հետո իրականացված ստուգումների արդյունքում:

ԳԼՈՒԽ VII

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 47

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակման յոթերորդ օրվանից:

Մույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և բոլոր անդամ պետություններում գործում է անմիջականորեն:

Կատարված է Բրյուսելում, 2007 թվականի օգոստոսի 9-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Բենիտա Ֆերրերո-Վալդներ

Հանձնաժողովի անդամ

[1] ՊՏ L 310, 09.11.2006թ., էջ 1:

[2] «Բյուջետային կարգապահության և սահուն ֆինանսական կառավարման մասին» Եվրոպական պառլամենտի, Խորհրդի և Հանձնաժողովի միջև կնքված միջինստիտուցիոնալ համաձայնագիր, ՊՏ C 139, 14.06.2006թ., էջ 1:

[3] ՊՏ L 248, 16.09.2002թ., էջ 1:

[4] ՊՏ L 357, 31.12.2002թ., էջ 1: